ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

N- 12

30.07.2014 թվական

## „ՎԵՐԻՆ ԴՎԻՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ„ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ << ՎԵՐԻՆ ԴՎԻՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության << Քաղաքացիական Օրենսգրքի>> 63-րդ հոդվածի 1-ին մասի, << Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 14-րդ մասի և << Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով համայնքի ավագանին որոշում է .

1. Հաստատել համայնքի ղեկավարի 29.07.2014թ. թիվ 30 որոշումը <<Վերին Դվինի Բժշկական Ամբուլատորիա>> փակ բաժնետիրական ընկերությունը / այսուհետ՝ Ընկերություն/ վերարակազմավորման ձևով վերակազմակերպել որպես Վերին Դվինի ԲժշկականԱմբուլատորիա >> համայնքային ոչ առևտրային կազմակերպությամբ / այսուհետ՝ ՀՈԱԿ /:

2. Հաստատել Վերին Դվինի ԲժշկականԱմբուլատորիա >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը :

3. Ընկերության շենքերը ու շինությունները , ինչպես նաև նվազագույն աշխատավարձի 10 000 –ապատիկ, կից ավելի արժողությամբ գույքն ընդունել Վերին Դվինի համայնքային հաշվեկշիռ :

4. Ընկերության շենքերը ու շինությունները , ինչպես նաև նվազագույն աշխատավարձի 10 000 –ապատիկ կից ավելի արժողությամբ գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել ՀՈԱԿ –ին ՝ դրանց նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու պայմանով՝ Վերին Դվին համայնքի ղեկավարի հետ կնքված պայմանագրի հիման վրա:

5. Հաստատել փոխանցման ակտը ըստ հավելվածների :

6. Կազմակերպության կառավարման, ինչպես նաև ՝ <<Պետական ոչ առևտրային Կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի „ Է „ ենթակետով ու 14-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները վերապահել Վերին Դվին համայնքի ղեկավարին:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ / ստորագրություն ներ՝ կողմ, դեմ, ձեռնպահ,նշելով բոլորի ազգանունները, ներառյալ բացակաները /

1. Ա. Պետրովա-կողմ

2.Պ. Թովմասով-կողմ

3. Ի. Դինխոև-կողմ

4. Ա. Բիթ Աբդալ –կողմ

5.Ս. Միխայլով-կողմ

6.Ս. Թամրազով-կողմ

7.Կ. Նիկոլաև - կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. Պետրովա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

N- 13

30.07.2014 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ 28.11.2013թ. ԹԻՎ 15 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով ,, Իրավական ակտերի մասին ,, 70-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով ,, Նվազագույն աշխատավարձի մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքը ավագանին որոշում է.

1. Վերին Դվին համայնքի ավագանու 20.11.2013թ. թիվ 15 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություն՝

5 –րդ կետի ,,61000 դրամ ,, բառերը փոխարինել ,, 71 000 դրամ ,, բառերով , իսկ 7, 8, 9, 10 ,11 կետերի ,, 61 000 դրամ ,,. բառերտ փոխարինել ,, 66 500 ,, բառերով:

2. Ուժը կորցրած ճանաչել ավագանու 28.11.2013 թ. թիվ 15 որոշումը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ / ստորագրություն ներ՝ կողմ, դեմ, ձեռնպահ,նշելով բոլորի ազգանունները, ներառյալ բացակաները /

1. Ա. Պետրովա-կողմ –
2. Պ. Թովմասով-կողմ
3. Ի. Դինխոև-կողմ
4. Ա. Բիթ Աբդալ –կողմ
5. Ս. Միխայլով-կողմ
6. Ս. Թամրազով-կողմ
7. Չ. Նիկոլաև - կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. Պետրովա